

17
ՄԱՐՏԻ
2020



Luys  Lnyu®

«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ
ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 1

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԻԾ..... 1

2. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ..... 13

3. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ..... 15

4. «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ..... 18

5. «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ 20

6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ..... 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից դեռևս 2019թ. օգոստոսի 9-ին իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել էր «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ)¹, որոնց վերաբերյալ 2019թ. սեպտեմբերի 12-ին «Լույս» հիմնադրամը ներկայացրել էր իր դիտարկումները²:

Նախագծերի փաթեթը 2019թ. նոյեմբերի 21-ին արժանացել է Կառավարության դրական եզրակացությանը և ներկայացվել է Ազգային ժողով:

Ստանալով պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ Նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակը ընդգրկվել է 2020թ. մարտի 3-ին գումարված հերթական նիստերի օրակարգ և ընդունվել առաջին ընթերցմամբ: Ստորև ներկայացնում ենք Նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակի վերաբերյալ մեր դիտարկումները:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ³

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի⁴ (այսուհետ՝ ԴՕ) 21-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությամբ մասնակիորեն վերացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության համար հատուկ դատավորների ինստիտուտը և նման գործերի քննությունը թողնվում է միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման

¹ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/1852>:

² «Լույս» հիմնադրամ, Դիտարկումներ 2019թ. օգոստոսի 9-ին արդարադատության նախարարության կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ», 12.09.2019թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.luys.am/img/artpic/small/f958196de7ae9d946ecb_XZB8F~V.PDF:

³ Նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11378&Reading=1>:

⁴ Ընդունվել է 2018 թ. փետրվարի 7-ին, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), հոդ.143, ՀՕ-95-Ն:

դատավորներին (Նախագծի 1-ին հոդված): Առաջին հայացքից՝ այս փոփոխությունը կարող է ողջունելի թվալ, քանի որ սահմանափակվում է այս հարցով կարգավորումներ սահմանելու հարցում գործող ԴՕ 21-րդ հոդվածի 3-րդ մասով Բարձրագույն դատական խորհրդին (այսուհետ՝ ԲԴԽ) վերապահված լայն հայեցողությունը: Այդուհանդերձ, Նախագծով առաջարկվող նոր կարգավորումը ամբողջական լուծումներ չի տալիս խնդրին և փոխարենը առաջ է բերում նոր խնդիրներ:

- Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելուն վերաբերող հարցերի քննությունը թողնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման բոլոր դատավորներին: Այս առումով առաջ են գալիս գաղտնիության պահպանման, անվտանգության, հանցագործությունների կանխման ու բացահայտման և այլ առանձնահատկությունների հետ կապված մտահոգություններ, և Նախագիծը թերևս պետք է նման գործեր քննող դատավորների համար որոշակի հատուկ պահանջներ սահմանելու հնարավորություն նախատեսեր: Նախագծերի փաթեթի քննարկման համար հրավիրված խորհրդարանական լսումների (այսուհետ՝ Խորհրդարանական լսումներ) ժամանակ նշվածի վերաբերյալ իր մտահոգությունները հայտնեց նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը:
 - Նման կարգավորումը կարող է խնդիրներ առաջացնել նաև հեռավոր մարզերի դեպքում, քանի որ հեռավոր մարզերից Երևան հասնելը՝ դատարանի թույլտվությունը ստանալու համար, կարող է բավական բարդ լինել: Հայտնի է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումները շատ հաճախ պահանջում են հրատապություն, քանի որ դրանից է կախված նրանց արդյունավետությունը, իսկ նման կարգավորման պարագայում դա կարող է վտանգի տակ դրվել: Խորհրդարանական լսումների ժամանակ այս խնդրի վերաբերյալ բարձրաձայնեց ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալը՝ նշելով, որ թերևս այս պարագայում հնարավոր է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունը ներկայացնել կենտրոնական ապարատի միջոցով: Սակայն, որքանով կարող է արդարացված լինել մարդու հիմնական իրավունքների սահմանափակում նախատեսող միջնորդությունը գործը անմիջապես չքննող, գործի բոլոր հանգամանքներին մանրամասն չտիրապետող անձի կողմից դատարանում ներկայացնելը:
2. ԴՕ 35-րդ հոդվածի 1-ին մասում՝ 149-րդ հոդվածի 1-ին մասով առաջարկվող փոփոխության հետ համակցությամբ (Նախագծի 3-րդ հոդված՝ Նախագծի 45-րդ հոդվածի հետ համակցությամբ) սահմանվում է կարգապահական տույժի նոր տեսակ՝ դատարանների նախագահների և վճռաբեկ դատարանի պալատների նախագահների լիազորությունները դադարեցնելը: Այս կարգավորումը հակասում է Սահմանադրության 166-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերին: 2015թ.

փոփոխություններով Սահմանադրությունը նախատեսել է դատարանների նախագահների և վճռաբեկ դատարանի պալատի նախագահի լիազորությունների սահմանափակ ժամկետ՝ համապատասխանաբար 3 տարի և 6 տարի: Սահմանադրությունը, սահմանելով դատարանների նախագահների և վճռաբեկ դատարանի պալատի նախագահի ընտրության կարգը, միաժամանակ չի նախատեսում դատարանի նախագահի և պալատի նախագահի լիազորությունների դադարեցման հնարավորություն և ընթացակարգ: Սահմանադրությունը ելնում է այն իրողությունից, որ դատարանների նախագահները առաջին հերթին դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, որոնց, ի հավելումն դատավորի բուն գործառույթների, վերապահված են որոշակի սահմանափակ կազմակերպչական գործառույթներ: Միաժամանակ, դատարանների նախագահներին նախկինում վերապահված կազմակերպչական գործառույթների հիմնական մասը, ըստ էության, վերապահվել է ԲԴԽ-ին: Այս համատեքստում, նշանակումից հետո դատարանի նախագահի կամ վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնանկության ընթացակարգ չնախատեսելու սահմանադրի մոտեցումը ուղղված է եղել երաշխավորելու նշված պաշտոնատար անձանց կողմից իրենց վերապահված գործառույթների բնականոն և անխափան իրականացումը⁵: Հետևաբար, վերջիններիս պաշտոնավարումը դադարեցնելու միակ սահմանադրական հիմքը նրանց՝ որպես դատավորի լիազորությունների դադարումը կամ դադարեցումն է:

3. ԴՕ 70-րդ հոդվածի 2-րդ մասում (Նախագծի 10-րդ հոդված) նախատեսվող փոփոխությունների նպատակն անհասկանալի է: Մասնավորապես պարզ չէ, թե ինչո՞ւ է առաջարկվում հրաժարվել դատավորի վարքագծի այնպիսի կանոնից, ինչպիսին 10-րդ կետով նախատեսվածն է⁶: Միաժամանակ, 14-րդ կետի առաջարկվող վերաձևակերպումը կարծում ենք՝ ավելի նեղ է, քան գործող կարգավորումը: Գործող ձևակերպումը պարտավորեցնում է դատավորին «ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն ինքնաբացարկի անհրաժեշտություն առաջացնող դեպքերը»: Օրինակ, եթե դատավորը երաշխավոր է հանդես գալիս խոշոր վարկային պայմանագրով՝ իմանալով, որ վարկատու բանկը գտնվում է իր տարածքային ընդդատության տիրույթում: Այսինքն՝ դատավորը բոլոր դեպքերում և առհասարակ պարտավորվում է դրսևորել շրջահայացություն, զսպվածություն՝ չառաջացնելու

⁵ Օրինակ, ԴՕ 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահը դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին, դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ, դատավորներին տրամադրում է արձակուրդ և այլն:

⁶ 10) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումը.

համար ինքնաբացարկի հիմքեր: Մինչդեռ 14-րդ կետի՝ Նախագծով առաջարկվող վերաձևակերպումը ավելի նեղ է և վերաբերում է միայն այնպիսի վարքագծին, որով դատավորը ուղղակի դիտավորությամբ նպատակ ունի ստեղծել ինքնաբացարկի հիմքեր:

4. ԴՕ 73-րդ հոդվածի 1-ին մասից (Նախագծի 11-րդ հոդված) առաջարկվում է հանել նվեր ստանալու արգելքի պայմանավորումը, «եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է իր պաշտոնեական պարտականություններն իրականացնելու հետ»: Եթե նպատակը «նվեր» հասկացության հստակ տարբերակման չափանիշներ սահմանելն է, թերևս առավել նպատակահարմար կլիներ, որ ԴՕ 73-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «նվեր» հասկացության սահմանման ժամանակ հղումը կատարվեր ոչ թե «սույն օրենսգրքին», այլ 73-րդ հոդվածի 1-ին մասին:
5. ԴՕ 77-րդ հոդվածով (Նախագծի 13-րդ հոդված) սահմանվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) ձևավորվող հետևյալ հանձնաժողովները՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և Ուսումնական հարցերի հանձնաժողով: Նշված 3 հանձնաժողովների կազմում, բացի դատավոր անդամներից, նախատեսված են նաև ոչ դատավոր 2-ական անդամներ, որոնք առաջադրվում են հասարակական կազմակերպությունների կողմից⁷:
- ԴՕ 74-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորների ընդհանուր ժողովը *դատավորների ինքնակառավարման* մարմին է, հետևաբար դրա կազմում դատավորներից բացի այլ անձանց մասնակցությունը անթույլատրելի է և հակասում է ինքնակառավարման էությանը: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին միջազգային փաստաթղթերով խիստ պահանջներ են առաջադրվում, քանի որ այդ մարմինների գործունեությունը սերտորեն առնչվում է դատավորի անկախության հետ: Կորպորատիվիզմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամներով կարևորվում է այն կարգապահական մարմիններում, որոնք պատասխանատու են կարգապահական խախտումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու համար: Բուլղարիայի վերաբերյալ կարծիքում Վենետիկի հանձնաժողովը մատնանշել է **միայն դատավորներից բաղկացած** փոքր փորձագիտական մարմնի մեխանիզմի մասին, որը դատավորների վարքագծի հարցերով կարծիք կներկայացնի մինչև իրավասու անկախ մարմնի կողմից վերջնական որոշման կայացումը⁸: <<

⁷ Թեկնածու կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը, և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն:

⁸ A means to achieve this could be to have a small expert body **composed solely of judges** giving an opinion on the capacity or behaviour of the judges concerned before an independent body would make a final decision.” CDL-AD(2003)012, Memorandum: Reform of the Judicial System in Bulgaria, կետ 15:

Սահմանադրությունը կորպորատիվ շահերի հակակշռման խնդիրը արդեն իսկ լուծել է դատավոր և ոչ դատավոր անդամներից բաղկացած ԲԴԽ պարիտետային կազմի միջոցով⁹, իսկ կարգապահական վարույթի հարուցման ընթացակարգերում ԴՕ-ն կորպորատիվիզմը հավասարակշռել է վարույթ հարուցող սուբյեկտների կազմի միջոցով՝ կարգապահական հանձնաժողով և արդարադատության նախարար: Արդարադատության նախարարին վերապահված վարույթ հարուցելու իրավասությունը ուղղված է հակակշռելու հենց նշված կորպորատիվիզմի ռիսկերը¹⁰: Այս համատեքստում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ոչ դատավոր անդամների ներմուծման առաջարկվող տարբերակը որևէ կերպ չի բխում դատական իշխանության ինքնակառավարման, դատավորների անկախության սկզբունքներից: Ավելին, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ընդգրկման ենթակա ՀԿ-ների ներկայացուցիչների ընտրությունը Նախագծով վերապահված է ԲԴԽ-ին, որը, ի վերջո, հանդես է գալու որպես Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված վարույթներով գործը քննող և որոշում կայացնող ատյան: Այս մոտեցումը կարելի է նույնացնել դատարանների կողմից իրենց առջև մեղադրանք ներկայացնող դատախազ ընտրելուն, ինչը որևէ պարագայում չի կարող լինել արդյունավետ կառուցակարգ:

6. Խնդրահարույց է ԴՕ 77-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը (Նախագծի 13-րդ հոդված), որի համաձայն՝ Ընդհանուր ժողովի կողմից հանձնաժողովների ոչ դատավոր անդամներին սահմանված ժամկետում չընտրելու դեպքում, քվեարկությունից հետո տասնօրյա ժամկետում, նրանց ընտրում է ԲԴԽ-ն: Այս կարգավորմամբ փաստացի հնարավորություն է նախատեսվում հանձնաժողովների ոչ իրավաբան անդամներին կրկին ընտրել ԲԴԽ-ի կողմից, որը ոչ միանշանակ էր ընդունվել Վենետիկի հանձնաժողովի կողմից¹¹:
7. Ողջունելի է ԴՕ 84-րդ հոդվածում (Նախագծի 15-րդ հոդված) ԲԴԽ նախագահի պաշտոնավարման ժամկետի սահմանափակումը, որով ԲԴԽ նախագահի պաշտոնավարման ժամկետ է սահմանվում **երկուսուկես տարին**¹²՝ առանց վերընտրման իրավունքի: Մտահոգիչ է, սակայն, Նախագծի 53-րդ հոդվածի 12-րդ մասը, որի համաձայն՝ պաշտոնավարման ժամկետի սահմանափակումը չի տարածվելու ԲԴԽ գործող նախագահի վրա, և նա շարունակելու է պաշտոնավարել որպես ԲԴԽ նախագահ՝ մինչև որպես ԲԴԽ անդամի իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:
8. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է ԲԴԽ նոր նախագահի ընտրությունը իրականացնել նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո

⁹ Պարիտետի իմաստը և առավելությունը բազմիցս ներկայացվել է Սահմանադրության նախագծի հիմնավորումներում, ուստի հարկ չենք համարում անդրադառանալ դրան:

¹⁰ Այս առումով տե՛ս նաև CDL-AD(2017)019, կետ 135:

¹¹ CDL-AD(2019)024, կետ 18:

10-օրյա ժամկետում: Մինչդեռ գործող կարգավորմամբ նոր նախագահի ընտրության ժամկետի հաշվարկի սկիզբը կապվում էր ԲԴԽ անդամի թափուր տեղը համալրվելու պահի հետ: Դա հնարավորություն է տալիս ԲԴԽ նախագահի ընտրությունը իրականացնել այն բանից հետո, երբ ԲԴԽ նախկին նախագահի (որը նաև անդամ է) թափուր տեղը համալրվել է ԲԴԽ նոր անդամով: Այսինքն՝ ԲԴԽ նախագահը ընտրվում էր բոլոր անդամների կազմի համալրումից հետո, իսկ Նախագծով առաջարկվող կարգավորմամբ մեկ անդամ, որը հետագայում է ընտրվելու, հնարավորություն չի ունենալու մասնակցել ԲԴԽ նախագահի ընտրությանը:

9. ԴՕ 90-րդ հոդվածի 6-րդ մասում (Նախագծի 19-րդ հոդված) առաջարկվող փոփոխությամբ դատավորը, որի վերաբերյալ կարգապահական վարույթի գործ է քննում ԲԴԽ-ն, զրկվում է դռնփակ նիստում գործի քննություն պահանջելու իրավունքից, քանի որ դռնփակ քննության հարցի որոշումը թողնվում է ԲԴԽ որոշմանը: Մինչդեռ, հաշվի առնելով կարգապահական վարույթի գործերի բնույթը և դրանց ազդեցությունը դատավորի հեղինակության վրա, Վենետիկի հանձնաժողովը ՀՀ ԴՕ վերաբերյալ իր 2014 և 2017 թվականների կարծիքներում ընդգծել է դատավորի պահանջով դռնփակ քննություն անցկացնելու անհրաժեշտությունը¹²:
10. ԴՕ 97-րդ հոդվածի 1-ին մասում (Նախագծի 22-րդ հոդված) առաջարկվում է դատավորների թեկնածուների հավակնորդների տարիքային շեմի իջեցում քսանութից քսանհինգ՝ զուգահեռաբար մասնագիտական փորձառության 5 տարվա պահանջը փոխարինելով 3-ով: Նախագծի հեղինակը դա պատճառաբանում է «դատական համակարգ երիտասարդ, համակարգի այլ ներկայացուցիչների հետ կախվածության կամ կապվածության մեջ չգտնվող անձանց ներգրավելու նպատակով»: Պետք է հիմնավորվի, թե ինչու է անհրաժեշտ նման փոփոխությունը այն դեպքում, երբ համանման փորձառություն արդեն իսկ ունեցել ենք անցյալում (2007թ. փետրվարի 21-ի Դատական օրենսգրքում դատավորի թեկնածությունների համար սահմանված 22 տարեկանի ցենզը 2014թ. հունվարի 10-ին ընդունված օրենքով բարձրացվեց 28 տարեկանի): Նույնը վերաբերում է ԴՕ 106-րդ հոդվածի 1-ին մասում (Նախագծի 27-րդ հոդված) առաջարկվող՝ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անձանց՝ թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար դասավանդման ցենզի իջեցմանը:
11. ԴՕ 98-րդ հոդվածի 2-րդ մասով (Նախագծի 23-րդ հոդված) նախատեսվում է որակավորման ստուգմանը մասնակցել ցանկացող հավակնորդների կողմից ԲԴԽ

¹² CDL-AD(2017)019, կետ 139, CDL-AD(2014)007, Joint Opinion on the draft Law amending and supplementing the Judicial Code (evaluation system for judges) of Armenia, կետ 97, Տե՛ս նաև See CDL-AD(2014)028, Opinion on the Draft Amendments to the Law on the High Judicial Council of Serbia, կետ 35 և 37:

ներկայացնել **բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ** (տե՛ս նաև սույն վերլուծության 25-րդ կետը): Նախագծի 28-րդ հոդվածի համաձայն՝ ԲԴԽ-ն բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որը իրականացնում է թեկնածուների հավակնորդների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով մեկամսյա ժամկետում ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի** ձևը սահմանվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Հարցաթերթիկի բովանդակության վերաբերյալ այլ կարգավորումներ Նախագծերի փաթեթով նախատեսված չեն, և անգամ ընդհանուր գծերով պարզ չէ, թե ինչ բովանդակություն է այն ունենալու, ինչը բավական խնդրահարույց է: Այս պայմաններում հարց է ծագում, թե ի՞նչ նպատակի է ծառայելու բարեվարքության հարցաթերթիկը և ի՞նչ տվյալներ են դրանում ամփոփվելու: Եթե այն պարունակելու է հավակնորդի գույքի վերաբերյալ տվյալներ, ապա պետք է նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հայտարարագրման երեք տեսակ՝

- 1) պաշտոնը ստանձնելիս,
- 2) պաշտոնավարման ընթացքում (տարեկան հայտարարագրեր),
- 3) պաշտոնավարումը դադարեցնելիս (հոդված 34, մաս 4):

Գույքի հայտարարագրման մեխանիզմի իմաստն այն է, որ Հանձնաժողովը կարողանա գնահատել հանրային ծառայողի գույքի փոփոխությունը նրա պաշտոնավարման ընթացքում: Մինչդեռ որակավորման ստուգմանը մասնակցել ցանկացող հավակնորդների կողմից հայտարարագրի ներկայացումը որևէ կերպ չի տեղավորվում այս համակարգի մեջ և պարզ չէ, թե ինչ նպատակի է ծառայելու:

Փոխարենը՝ այս կերպ ավելորդ բարդացվում է դիմելու՝ առանց այն էլ փաստաթղթատար գործընթացը, ինչպես նաև անհարկի ծանրաբեռնվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Առաջարկվող կարգավորումը առաջացնում է այն մտահոգությունը, թե արդյո՞ք կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ չափից ավելի չի իջեցվում մարդու մասնավոր կյանքի սահմանադրական իրավունքի պաշտպանությունը: Արդյո՞ք մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի (Սահմանադրության 31-րդ հոդված) տեսանկյունից արդարացված և համաչափ է այս իրավունքին նման միջամտությունը:

12. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, բացի

բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգումից, իրականացնելու է նաև՝

- անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, վերջիններիս կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն,
- անձի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն,
- անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն,
- անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն,
- անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն: Վերոհիշյալ տվյալների ուսումնասիրության համար Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրվում է բավական լայն և ընդհանրական լիազորություններ, այն է՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, **այլ անձանցից** պահանջելու և ստանալու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող **ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն**¹³: Փաստորեն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը իրավասու է լինելու ցանկացած անձից պահանջելու ցանկացած բնույթի տեղեկություն: Պարզ չէ, թե այն անձինք, որոնցից կպահանջվի տեղեկություններ, ինչ իրավունքներ և պարտականություններ են ունենալու: Ինքնին խնդրահարույց է նաև «**ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն**» ձևակերպումը, որը չափազանց ընդհանրական է և կարող է առիթ հանդիսանալ մարդու մասնավոր և ընտանեկան կյանք ներխուժելու համար: Անհասկանալի են նաև թեկնածուների հավակնորդների վերաբերյալ այնպիսի տվյալների ուսումնասիրությունը, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունները և աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները:

13. Նախագծով առաջարկվող փոփոխությունների առանցքային մասը վերաբերում է դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերի և ընթացակարգի վերանայմանը: Նախագծով առաջարկվող կարգավորումները

¹³ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մաս:

նշանակալիորեն թուլացնում են դատավորի անկախությունը և միայն կոպիտ, աններելի և դատական իշխանության հեղինակությունը խաթարող արարքների, մասնագիտական լուրջ թերացումների համար պատասխանատվության սկզբունքը:

- Այսպես, ընդառաջ գնալով դատական իշխանության անկախության բնագավառում միջազգային բազմաթիվ փաստաթղթերի պահանջներին, ԴՕ-ի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը դիտարկում էր որպես կարգապահական պատասխանատվության հիմք միայն այն դեպքում, երբ խախտումն **ակնհայտ է և կոպիտ**: Դեռևս 2014թ. ԴՕ փոփոխություններով «ակնհայտ և կոպիտ» խախտում հասկացությունների ներմուծումը և դրանով իսկ դատավորին պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակեցումն ու սահմանափակումը ողջունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից¹⁴: ԴՕ ներկայիս ձևակերպմամբ դատավորի կողմից թույլ տրված օրենքի խախտման համար դատավորին պատասխանատվության ենթարկելը պայմանավորվել է երկու պայմանների միաժամանակյա առկայությամբ. մի կողմից՝ մեղքի բնույթով (դիտավորություն կամ կոպիտ անփութություն), մյուս կողմից՝ խախտման բնույթով (ակնհայտ և կոպիտ): Իր հերթին՝ «կոպիտ անփութության» որակման համար կարևոր է ոչ միայն մեղքի ձևը (*mens rea*), այլ նաև՝ դրա արդյունքում առաջացած վնասի ծանրությունը (*actus reus*): Ըստ այդմ, ԴՕ ներկայիս ձևակերպմամբ դատավորի կողմից թույլ տրված օրենքի ոչ թե ցանկացած կոպիտ անփութությամբ կատարված խախտում է համարվում կարգապահական պատասխանատվության հիմք, այլ միայն այն խախտումները, որոնք եղել են միաժամանակ և՛ անկնհայտ, և՛ կոպիտ: Այսինքն՝ ԴՕ-ի կարգավորմամբ բացառվել է *de minimis* խախտումների համար դատավորի պատասխանատվությունը, եթե անգամ դրանք կատարվել են կոպիտ անփութությամբ¹⁵: Դրանով իսկ ԴՕ-ն նվազագույնի է հասցնում արդարադատություն իրականացնելիս դատավորի կայացրած ակտերի համար պատասխանատվության դեպքերը, այնպես, որ դատավորները պատասխանատվության չենթարկվեն իրենց որոշումների կամ վճիռների բովանդակության, այդ թվում՝ տարբեր դատարանների կողմից իրավական նորմերի տարաբնույթ մեկնաբանության, դատական սխալների օրինակների համար¹⁶: Այս մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ դատական իշխանության անկախությունը առավել բարձր արժեք է, քան առանձին դատական սխալները, որոնք, որպես կանոն, հնարավոր է վեր հանել և ուղղել բողոքարկման

¹⁴ CDL-AD(2014)007, կետ 113-115, CDL-AD(2017)019, կետ 130-131:

¹⁵ CDL-AD(2017)019, կետ 131:

¹⁶ Joint Opinion on the Constitutional Law on the Judicial System and Status of Judges of Kazakhstan, CDL-AD(2011)012, կետ 60: Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում Դատական անկախության վերաբերյալ 2010թ. Կիևյան հանձնարարականներ, կետ 25:

իրավունքի միջոցով: Դատական ակտերի համար դատավորի պատասխանատվության լայն հնարավորությունների ստեղծումը առնչվում է դատավորի անկախության շատ նուրբ ոլորտի՝ մեծ ռիսկեր առաջացնելով դատավորի գործունեությանը միջամտելու, նրան ազդեցության տակ պահելու համար, ինչի արդյունքում կարող է արմատապես խարխլվել դատական իշխանության անկախությունը: Մինչդեռ Նախագծով առաջարկվող կարգավորման արդյունքում ցանկացած դատական սխալ կարող է կարգապահական պատասխանատվության հիմք լինել, քանի որ ըստ նախագծի նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը կարգապահական պատասխանատվության հիմք է, եթե կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Իսկ «արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում *ակնհայտորեն* կարող էր և պարտավոր էր դա անել»:

- ԴՕ 142-րդ հոդվածի 6-րդ մասի առաջարկվող խմբագրությամբ (Նախագծի 40-րդ հոդվածի 5-րդ մաս) էական կարգապահական խախտում է համարվում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ և հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ **հեղինակազրկել է** դատական իշխանությունը: Ըստ Նախագծի՝ էական կարգապահական խախտման հաջորդ հիմքը դատավորի վարքագծի կանոնները խախտելն է¹⁷, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ: Երրորդ հիմքը երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելն է: Վերոգրյալով զգալիորեն ընդլայնվում է որպես էական կարգապահական խախտում որակման ենթակա արարքների շրջանակը՝ դրանով իսկ նպատակ ունենալով ստեղծել Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա դատավորի լիազորությունները դադարեցնելու լայն հնարավորություններ: Նախագծով 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում կիրառվում է «...հեղինակազրկում է դատական իշխանությունը» ձևակերպումը (Նախագծի 40-րդ հոդված, 5-րդ մաս): Վենետիկի հանձնաժողովը քննադատության է արժանացրել նման անորոշ ձևակերպումները: Ըստ Հանձնաժողովի՝ նմանօրինակ ձևակերպումների գործածումը վտանգավոր է

¹⁷ Դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-9-րդ, 11-12-րդ, 15-16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-8-րդ, 13-14-րդ և 18-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ:

դատական իշխանության անկախության համար¹⁸: Հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով Հանձնաժողովը հորդորել է նման հասկացությունները օժտել հստակ բովանդակությամբ¹⁹: Անորոշ ձևակերպումներից խուսափելու հիմնական նպատակն է հնարավորինս մատչելի դարձնել այն արարքի նկարագրությունը, որը հանգեցնում է կարգապահական պատասխանատվության: Արարքի հստակ նկարագրությունը պետք է օգնի դատավորին կանխատեսելու սեփական գործողությունների հետևանքները²⁰: Մեկ այլ կարծիքում Հանձնաժողովը նշել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու այնպիսի հիմքեր, ինչպիսիք են «վարկաբեկելով դատական համակարգը», «նվազեցնելով հասարակության վստահությունը դատական համակարգի անկախության և անկողմնակալության նկատմամբ», անորոշ են ձևակերպված²¹: Միաժամանակ, Հանձնաժողովը ընդունել է այն փաստը, որ բաց ձևակերպումներից բացարձակապես խուսափելն անհնարին է և նշել, որ դրանք անհրաժեշտ են կարգապահական պատասխանատվության ինստիտուտի ճկունությունը ապահովելու համար²²:

- Կառավարությունը որևէ կերպ չի հիմնավորում, թե ինչու են կարգապահական պատասխանատվության հիմքերից հանվում ԴՕ 142-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերը²³, որոնք լրացուցիչ երաշխիքներ էին դատավորի շարունակական մասնագիտական բարձր պատրաստվածությունն ապահովելու և նրա նկատմամբ ապօրինի միջամտությունից պաշտպանվելու համար:

¹⁸ Venice commission opinion on the laws on disciplinary liability and evaluation of judges of “the former Yugoslav Republic of Macedonia”, adopted by the Venice Commission at its 105th Plenary Session, CDL-AD(2015)042, կետ 16, տե՛ս նաև Venice commission opinion on the draft judicial code adopted by the Venice Commission at its 112th Plenary Session, CDL-AD(2017)019, կետ 63:

¹⁹ Նույն տեղում, CDL-AD(2015)042, կետ 36:

²⁰ Joint opinion of the Venice Commission and OSCE/ODIHR on the draft amendments to the legal framework on the disciplinary responsibility of judges in the Kyrgyz Republic, CDL-AD(2014)018, կետ 24:

²¹ Joint opinion of Venice commission and the Directorate of human rights (DHR) of the Directorate General of human rights and rule of law (DGI) of the council of Europe on the amendments to the judicial code and some other laws, adopted by the Venice Commission at its 120th Plenary Session (Venice, 11 - 12 October 2019), CDL-AD(2019)024, կետ 40:

²² Նույն տեղում:

²³ «4) դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը.

5) սույն օրենսգրքով սահմանված կարգով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը»:

14. Նախագծի 41-րդ հոդվածով նախատեսվում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու անհամեմատ ավելի երկար ժամկետներ, քան գործող ԴՕ 144-րդ հոդվածով են նախատեսված: Մասնավորապես, դատավորի վարքագծի կանոնների խախտման դեպքում գործող կարգավորմամբ նախատեսված է այն հայտնաբերելուց հետո **մեկամսյա** վաղեմության *ժամկետ, որը փոխարինվում է եռամսյա ժամկետով*: Դատավորի կողմից օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու, ինչպես նաև գույքի, եկամուտների և շահերի պարտադիր հայտարարագիր ներկայացնելու պահանջը խախտելու դեպքում նախատեսված է այն հայտնաբերելուց հետո մեկ տարվա վաղեմության ժամկետ: Սրանք նույնպես ստեղծում են դատավորի գործունեությանը միջամտելու և նրան ճնշման տակ պահելու հնարավորություններ: Ստացվում է՝ խախտումն արդեն իսկ հայտնաբերվել է, սակայն վարույթ հարուցող սուբյեկտը **երեք ամիս կամ նույնիսկ մեկ տարի** շարունակ դատավորին պահում է անորոշության մեջ՝ սպառնալով կարգապահական վարույթի հարուցմամբ:
15. Իսիստ խնդրահարույց է ԴՕ 147-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում (Նախագծի 44-րդ հոդված) առաջարկվող փոփոխությունը, որով հարուցված կարգապահական վարույթի ընթացքում վարույթ հարուցող մարմնին իրավունք է վերապահվում առաջարկելու *ֆիզիկական և իրավաբանական անձանց* ներկայացնել կարգապահական վարույթի համար նշանակություն ունեցող *տեղեկություններ և նյութեր*: Գործող ԴՕ-ն սահմանափակվում է միայն «հաղորդում ներկայացրած» անձով, և խոսքը վերաբերում է «կարգապահական վարույթի համար նշանակություն ունեցող տեղեկությունների վերաբերյալ նյութեր», այսինքն՝ ապացույցներ ներկայացնելուն (ԴՕ 14-րդ հոդված, 3-րդ մաս, 4-րդ կետ): Նախագծով առաջարկվող կարգավորումը մի կողմից խախտում է կարգապահական վարույթի գաղտնիության սկզբունքը, որը նախատեսված է նույն հոդվածի 9-րդ մասում: Մյուս կողմից՝ Նախագիծը, փաստորեն, թույլ է տալիս կարգապահական հանձնաժողովի հանդես գալու ֆիզիկական և իրավաբանական անձանց ուղղված հրապարակային կոչով՝ դատավորի դեմ **ցանկացած տեղեկություն** (և ոչ միայն ապացույց) ներկայացնելու վերաբերյալ: Նման կարգավորումը մեծ ռիսկեր է պարունակում դատական իշխանության և դատավորի անկախության ու հեղինակության համար և անթույլատրելի է:
16. Միաժամանակ, անթույլատրելի և չպատճառաբանված է ԴՕ 155-րդ հոդվածի 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչելը (Նախագծի 48-րդ հոդվածի 2-րդ կետ): Դրանով նախատեսվում էր կարևորագույն երաշխիք կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորի համար, այն է՝ «դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիման վրա»:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ²⁴

17. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի²⁵ (այսուհետ՝ ՍԴՕ) 9-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսվում է փոփոխություն (Նախագծի 1-ին հոդված), որով Սահմանադրական դատարանի (այսուհետ՝ ՍԴ) դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն, բացի գլխավոր դատախազից, իրավասու կլինի իրականացնել նաև վերջինիս տեղակալը: ՍԴ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելը միայն գլխավոր դատախազին վերապահելը ինքնանպատակ չէր և միտված էր բարձրագույն դատարանի դատավորի անկախության ապահովմանը, իսկ նման կարգավորումը էականորեն նվազեցնում է այդ երաշխիքը:
18. Նախագծի 2-րդ հոդվածով՝ Նախագծի 4-րդ հոդվածի հետ համակցությամբ էականորեն ընդլայնվում են ՍԴ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի ցանկում նախատեսված էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցման հիմքերը՝ հավասարեցվելով դատավորների համար նախատեսվածին: Նշենք, որ չափազանց խնդրահարույց է ՍԴ դատավորի և դատավորի համար սահմանել վարքագծի համանման կանոններ: Սահմանադրական դատարանի պարագայում խոսքը Սահմանադրության գերակայության երաշխավորի մասին է, և այս դատարանի դատավորների մասնագիտական և անձնական որակներին բոլոր երկրներում էլ, որտեղ գործում է սահմանադրական արդարադատության կենտրոնացված մոդելը, առաջադրվում են այդ դատարանի բարձր դերին համապատասխան՝ ավելի բարձր պահանջներ և չափանիշներ (դրանք արտացոլված են նաև ՀՀ Սահմանադրության 165-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներում, ՍԴ դատավորների՝ ԱԺ կողմից ընտրության կարգում): Նշվածի համատեքստում, համոզիչ չեն նաև ՍԴՕ 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում (Նախագծի 4-րդ հոդված) արվող փոփոխությունները՝ փորձելով համահարթեցնել և ՍԴ դատավորների վրա տարածել Դատական օրենսգրքով նախատեսված դատավորի վարքագծի մանրամասն կանոնները: Այլ երկրների սահմանադրական դատարանների

²⁴ Նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11379&Reading=1>:

²⁵ Ընդունվել է 2018 թվականի հունվարի 17-ին, ՀՀՊՏ 2018.01.31/7(1365), հոդ. 74, ՀՕ-42-Ն:

գործունեությունը կարգավորող ակտերի ուսումնասիրությունը նույնպես թույլ չի տալիս նման պնդումներ անել²⁶:

19. Նախագծի 5-րդ հոդվածի վերաբերյալ տե՛ս սույն վերլուծության 4-րդ կետում արված դիտարկումները:
20. ՍԴՕ 82-րդ հոդվածով (Նախագծի 6-րդ հոդված) առաջարկվում է ՍԴ դատավորին էական կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար ՍԴ դիմելու իրավասությունը բացառապես վերապահել Ազգային ժողովին, որը կկարողանա ՍԴ դիմել պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ: Նման կարգավորումը հակասահմանադրական է, ինչպես նաև հակասում է Սահմանադրական դատարանի 2019թ. հոկտեմբերի 14-ի ՍԴԱՈ-112 որոշմանը: Սահմանադրական դատարանը համարել էր, որ Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը Սահմանադրական դատարանի բացառիկ լիազորությունն է: Սահմանադրական դատարանի դատավորի անկախության ապահովման նպատակով սահմանադիրը Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը վերապահել է միայն Սահմանադրական դատարանի դատավորներին (Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ): Սահմանադրական նման կարգավորման տրամաբանությունը բխում է սահմանադրական մարմինների համակարգում Սահմանադրական դատարանի կարգավիճակից և դրանով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանի դատավորների անկախության երաշխիքներին ներկայացվող առանձնահատուկ պահանջներից: Սահմանադրությունն առավելագույնս սահմանափակել է Սահմանադրական դատարանի դատավորների նկատմամբ իշխանության մյուս թևերի ազդեցությունը՝ դրանով իսկ բացառելով ճնշումների հնարավորությունը և երաշխավորելով Սահմանադրական դատարանի սահմանադրական առաքելության արդյունավետ իրականացումը: Նման կարգավորում նախատեսելը հակասում է նաև Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, անդրադառնալով Լեհաստանի իշխանությունների և Սահմանադրական դատարանի փոխհարաբերություններին, նշում է, որ ոչ մի ժողովրդավարական կառավարություն, որը հարգում է իրավունքի գերակայությունը, չի կարող

²⁶ Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերի և ընթացակարգի խնդրահարույց կողմերին արդեն իսկ անդրադարձել ենք Դատական օրենսգրքի նախագծի հետ կապված դիտարկումներում, և քանի որ առաջարկվող կարգավորումները նույնանում են, չենք կրկնում:

ընտրողաբար հրաժարվել ընդունելու դատարանների՝ իր համար ոչ ցանկալի որոշումները, հատկապես Սահմանադրական դատարանի որոշումները²⁷:

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ²⁸

21. Նախագծի առաջին հոդվածով նախատեսվում է կրկին ներդնել մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) միջոցով կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման կառուցակարգը: Հիշեցնենք, որ Խորհրդի միջոցով Հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ կարգավորումները հանվել էին Ազգային ժողովի նախագահ Ա. Միրզոյանի կողմից նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների արդյունքում²⁹: Նշված փոփոխությունների արդյունքում Հանձնաժողովի առաջին կազմը ձևավորվել էր Ազգային ժողովի կողմից Կառավարության, Ազգային ժողովի իշխող և ընդդիմադիր խմբակցությունների և ԲԴԽ-ի կողմից կատարված առաջադրումների հիման վրա: Նախագծով նախատեսվում է, որ Խորհուրդը կազմված լինի **Կառավարության, Ազգային ժողովի, ԲԴԽ-ի, Մարդու իրավունքների պաշտպանի և Փաստաբանների պալատի** կողմից նշանակված մեկական անդամներից:
22. Բավական խնդրահարույց է Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու ընտրելու համար Խորհրդի կողմից մրցույթի հետ կապված գործառույթները և գործունեության կազմակերպումը: Նախ նշենք, որ ի տարբերություն նախկին կարգավորումների, որով մրցույթը անցկացվում էր 3 փուլով (փաստաթղթային ստուգման, թեստավորման և հարցազրույցի), Նախագծով առաջարկվում է մրցույթը կազմակերպել 2 փուլով՝ փաստաթղթային ստուգման և հարցազրույցի: Առաջարկվող կարգավորմամբ մրցույթի փուլերից հանվել է թեստավորման փուլը, որը, սակայն, կարևոր նշանակություն ունի թեկնածուների գիտելիքների օբյեկտիվ ստուգման համար:

²⁷ Council of Europe, Parliamentary Assembly, Resolution 2316 (2020), adopted by the Assembly on 28 January 2020 (4th Sitting), կետ 6 (հասանելի է հետևյալ հղումով՝ <http://semantic-pace.net/tools/pdf.aspx?doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbmQvbnceG1sL1hSZWYvWDJlURXLWV4dHluYXNwP2ZpbGVpZD0yODUwNCZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NlbnWFudGljcGFjZS5uZXQvWHRHsdC9QZGYvWFJlZi1XRRC1BVC1YUwyUERGlnhzbA==&xsltparams=ZmlsZWlkPTI4NTA0>):

²⁸ Նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11380&Reading=1>:

²⁹ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2019թ. սեպտեմբերի 13-ին, ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1, հոդ.915.6, ՀՕ-180-Ն:

23. Խնդրահարույց է նաև մրցույթի հարցազրույցի փուլի ընթացակարգին վերաբերող պահանջները: Նախկին կարգավորմամբ³⁰ սահմանված էր մրցույթի հարցազրույցի փուլին զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ Խորհրդի կողմից սահմանված կարգին համապատասխան մասնակցության իրավունքը: Այս ամբողջ գործընթացի թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը պետք է ապահովվի ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների միջոցով: Նախագծի 2-րդ հոդվածով չկա որևիցե կարգավորում, և պարզ չէ, թե արդյոք հարցազրույցներն անցկացվելու են դռնբա՛ց, թե՛ դռնփակ կարգով:
24. Նախագծի 8-րդ հոդվածով Հանձնաժողովը իրավասու կլինի «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ»³¹ կարգապահական վարույթ հարուցել դատավորի և ԲԴԽ անդամի նկատմամբ, ինչպես նաև դիմել Ազգային ժողովի խմբակցություններին Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ: Սույն վերլուծության 19-րդ կետում արդեն իսկ անդրադարձել ենք այս կարգավորման հակասահմանադրականությանը:
25. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն (Նախագծի 8-րդ հոդված)՝ Հանձնաժողովը տրամադրում է ԲԴԽ անդամների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների հավակնորդների **բարեվարքության վերաբերյալ** խորհրդատվական բնույթի եզրակացություններ: «Հանրային ծառայության մասին» օրենքը, բարեվարքության նկատմամբ վերահսկողության հարցերում

³⁰ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդ. 13, մաս 28, ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2017թ. հունիսի 9-ին, ՀՀՊՏ 2017.06.30/42(1317), հոդ.660, ՀՕ-96-Ն:

³¹ **69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերը ավելացվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սահմանադրական օրենքի նախագծի 9-րդ հոդվածով և դատավորների համար նախատեսում են պարտավորություն՝**

- ներկայացնել գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ,
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնել պատշաճ նյութեր, որոնք հաստատում են, որ իր գույքի փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն հիմնավորվում է օրինական եկամուտներով, կամ իր մոտ առկա չէ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրը օրինական է և արժանահավատ է:

Հանձնաժողովի իրավասությունները սահմանելիս վերապահումներ է կատարել պատգամավորի, դատավորի, ԲԴԽ անդամի, դատախազի համար, որոնց մասով համապատասխան գործառույթների իրականացումը իրավացիորեն վերապահվել էր համապատասխան մարմինների ներսում գործող կամ հատուկ ստեղծված այլ մարմինների (պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման համար ժամանակավոր հանձնաժողով, Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող Կարգապահական հարցերի հանձնաժողով, ԲԴԽ, Դատախազության էթիկայի հանձնաժողով): Նման մոտեցումը, օրինակ, պատգամավորի պարագայում կամ դատավորների պարագայում՝ բխում է իշխանությունների բաժանման սկզբունքի և այդ մարմինների անկախության ապահովման երաշխիքների անհրաժեշտությունից: Նախագծով Հանձնաժողովին նույն ոլորտում համապատասխան գործառույթների վերապահումը՝ առանց համապատասխան օրենքներում արդեն իսկ այլ մարմիններին վերապահված նույնական գործառույթներին հետ դրանց համադրման, ստեղծում է գործառույթների կրկնօրինակման, մեկ այլ մարմնի գործառույթների դաշտ ներխուժելու վտանգ (ռիսկ): Վերոհիշյալ պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի դատավորների և դատավորների, վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների ներկայացման գործառույթը առաջացնում է սահմանադրական կարգավորումների հետ կապված խնդիրներ: Դատական իշխանության անկախության միջազգային չափանիշներին համահունչ՝ ՀՀ Սահմանադրությունը նախատեսել է հատուկ մարմին՝ ԲԴԽ, որին վերապահվել են դատական իշխանության կազմակերպման և գործունեության հարցերում կարևորագույն լիազորություններ, այդ թվում՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը՝ բարեվարքության կանոնների խախտման համար: Նման մարմնի նախատեսումը սահմանադրական մակարդակով պայմանավորված է դատական իշխանության անկախության ապահովման գործառույթներով, որոնց արդյունավետ իրականացման համար ԲԴԽ-ն ունի կազմավորման հատուկ կարգ և անկախության երաշխիքներ: Հանձնաժողովին դատավորների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելու իրավասության վերապահումը լուրջ հարցադրումներ և մտահոգություններ է առաջացնում սահմանադրականության, իշխանությունների բաժանման, դատական իշխանության անկախության տեսանկյունից:

26. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով (Նախագծի 9-րդ հոդված) սահմանվում է, որ Հանձնաժողովը իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարատու անձանց *առնչվող* տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված Կենտրոնական

դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն: «Անհատիկ տեղեկություններ» արտահայտությունը գործնականում տարածական մեկնաբանության տեղիք կարող է տալ և պարզ չէ՝ արդյո՞ք դա սահմանափակվելու է միայն հայտարարատու պաշտոնատար անձով, թե՞ կարող է ընդգրկել անձանց անորոշ և լայն շրջանակ: Ասվածը առավել ակնբախ է դառնում, երբ խնդիրը դիտարկում ենք Նախագծերի փաթեթում ընդգրկված «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերում առաջարկվող փոփոխությունների համատեքստում, որոնցից հանվում են տեղեկություններ ստանալը անձանց որոշակի շրջանակով և օրենքների որոշակի պահանջներով պայմանավորելու կարգավորումները, որոնք զսպաշապիկի դեր էին կատարում: Փոխարենը՝ նշված օրենքների փոփոխություններով նախատեսվում է Հանձնաժողովի պահանջով՝ Հանձնաժողովի կողմից «իր գործառույթներն իրականացնելու կապակցությամբ» տեղեկություն տրամադրելու անվերապահ հիմք:

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ³²

27. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)³³ 29-րդ հոդվածում (Նախագծի 1-ին հոդված) նախատեսվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելուն վերաբերող կարգավորումներ, որոնց վերաբերյալ դիտարկումներն արդեն իսկ ներկայացվել է Դատական օրենսգրքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ վերը արված դիտարկումներում: Օրենքի 34-րդ հոդվածում (Նախագծի 3-րդ հոդված) առաջարկվող փոփոխության արդյունքում էականորեն ընդլայնվում է այն անձանց շրջանակը, ովքեր պարտավոր են ներկայացնել հայտարարագիր: Այսպես, գործող սահմանմամբ հայտարարագրման պարտականություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձի³⁴ ամուսինը, անչափահաս զավակը, խնամակալության կամ

³² Նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11381&Reading=1>:
³³ Ընդունվել է 2018թ. մարտի 23-ին, ՀՀՊՏ 2018.03.29/24(1382), հոդ. 399, ՀՕ-206-Ն:
³⁴ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «**հայտարարատու պաշտոնատար անձինք են** պետական պաշտոն զբաղեցնող անձինք, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների

հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ (հոդված 34, մաս 9): Մինչդեռ, 34-րդ հոդվածի 9-րդ մասի նոր խմբագրությամբ (Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետ) հայտարարագրման պարտականություն են ձեռք բերում նաև հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, հայտարարատու պաշտոնատար անձի՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ծնողը, քույրն ու եղբայրը: Միաժամանակ, հայտարարագիր ներկայացնելու փաստով անձը հաստատում է, որ տեղյակ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրավասությանը՝ ստանալու իր վերաբերյալ տեղեկություններ, ներառյալ՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն (հոդված 34, մաս 12):

28. Նախագծի 3-րդ հոդվածով ներդրվում է **իրավիճակային հայտարարագրի** ինստիտուտը: Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովը հայտարարագրված կամ հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անձից կամ այն անձից, ում սեփականության իրավունքով կարող է պատկանել հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող, օգտագործվող կամ տնօրինվող անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը կամ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով թանկարժեք գույքը, պահանջել ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:

ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանության, հարկային, մաքսային, քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք»:

Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական (Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս):

Իրավիճակային հայտարարագրի նկատմամբ տարածվում են հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի բովանդակության և ներկայացման կարգի համար նախատեսված ընդհանուր կանոնները, իսկ Հանձնաժողովի՝ իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով: Թերևս խնդրահարույց է այն հանգամանքը, որ լայն դաշտ է բացվում օրենքի իմաստով հայտարարագիր ներկայացնելու որևէ պարտականություն չունեցող քաղաքացիների վրա (որոնք ինչ-ինչ հանգամանքների բերումով եղել են հայտարարագրման ենթակա գործարքի կողմ) հայտարարագրման պարտականություն դնելու, ինչպես նաև այդ համատեքստում՝ անձին առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն ստանալու, ինչը կարող է հանգեցնել վերջիններիս մասնավոր կյանքի իրավունքի սահմանափակմանը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ³⁵

29. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի³⁶ (այսուհետ՝ Օրենք) 13.4-րդ հոդվածում Նախագծով առաջարկվող փոփոխությամբ զգալիորեն թուլացվում է բանկային գաղտնիքի պաշտպանությունը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, փաստորեն, իրավունք է վերապահվում դիմելու և բանկերից ստանալու հայտարարատու հանրային ծառայողների, նրանց խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց, հայտարարատու պաշտոնատար անձի՝ ՀՀ ռեզիդենտ ծնողի³⁷, քրոջ և եղբոր, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձի վերաբերյալ, որի տրամադրումը բանկերի կողմից բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում: Գործող օրենքի կարգավորումներով նման տեղեկատվության ձեռքբերումը հանձնաժողովի կողմից հնարավոր է միայն հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց

³⁵ Նախագիծը հասանելի է հետյալ հղմամբ՝ <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11383&Reading=1>:

³⁶ Ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 7-ին, ՀՀ ԱԺՏ 1996.10.15/19(1119), հոդ. 230, ՀՕ-80-Ն:

³⁷ Օրենքի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ է համարվում այն անձը, ով մեկ տարվա ընթացքում 183 և ավելի օր փաստացի գտնվել է Հայաստանի Հանրապետությունում:

վերաբերյալ՝ նրանց համաձայնությամբ (հոդված 13.4): Այլ մարմինների պարագայում Օրենքը բանկային գաղտնիքի պաշտպանության բավական խիստ մեխանիզմներ է նախատեսում: Օրինակ, բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրվում են միայն դատարանի որոշման հիման վրա և միայն քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ («Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)³⁸:

30. Համակողմանի ուսումնասիրություն և պատշաճ հիմնավորում պահանջող խնդիր է բանկային գաղտնիքի պահպանման ռեժիմի թուլացման հնարավոր անդրադարձը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի գրավչության և հետագա զարգացման վրա: Նշված խնդիրներից խուսափելու նպատակով պետք է իրականացվեր նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում, ինչը նախատեսված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով³⁹:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

31. Դատական օրենսգրքի Նախագծով առաջարկվող կարգավորումները նշանակալիորեն ընդլայնում են էական կարգապահական խախտում հանդիսացող արարքների շրջանակը՝ դրանով իսկ ընդլայնելով դատավորի լիազորությունները դադարեցնելու հիմքերը, նախատեսում են Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց կարգապահական պատասխանատվության սանկցիաների շրջանակ:
32. Նախագծով Սահմանադրական դատարանի դատավորին էական կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք է վերապահվել Ազգային ժողովին: Այս առումով, հաշվի չեն առնվել Սահմանադրության պահանջները և Սահմանադրական դատարանի որոշումը, որը Սահմանադրության 170-րդ հոդվածի համաձայն՝ վերջնական է և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:
33. Խնդրահարույց է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության համար նախատեսվող մրցույթի թեստավորման փուլի կրճատումը և անցկացման կարգի կանոնակարգումների բացակայությունը:

³⁸ Նշենք, որ միայն որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելու գործող կարգավորումը Կառավարության առաջարկության հիման վրա նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել, սակայն համապատասխան փոփոխություն նախատեսող օրենքը Հանրապետության նախագահի կողմից ուղարկվել է Սահմանադրական դատարան դրա սահմանադրականությունը որոշելու հարցով:

³⁹ Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ. մարտի 21-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381), հոդ. 373, ՀՕ-180-Ն:

34. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններով Հանձնաժողովին վերապահվում են նոր գործառույթներ, երբ մի կողմից՝ հստակ սահմանված չէ դրանց իրականացման գործիքակազմը, իսկ մյուս կողմից՝ առկա է մեկ այլ մարմնի գործառույթների դաշտ ներխուժելու վտանգ:
35. Ներդրվել է իրավիճակային հայտարարագրի ինստիտուտը, որով հնարավորություն է ստեղծվում ի սկզբանե հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունեցող անձանց վերաբերյալ ստանալ բանկային և օրենքով գաղտնիք համարվող այլ բնույթի լայն տեղեկություններ, ինչը կարող է հանգեցնել մասնավոր կյանքի պաշտպանության անհամաչափ թուլացման:
36. Բանկային գաղտնիքի պաշտպանության էական թուլացումը և անձանց բանկային տվյալների մատչելիությունը լուրջ հարցադրումներ են առաջացնում բանկային համակարգի վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից, որոնք Նախագծերի փաթեթում գնահատված չեն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: